

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ/ ԴՏՀՏՇՀ/ 2011թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011թ. ընթացքում Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1. Հունվար-փետրվար ամիսներին դասագրքերի բաշխման վերաբերյալ մարզպետարանների կրթության վարչությունների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կազմվել է 2010-2011 ուսումնական տարվա տարեկան հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր անուն դասագրքի բաշխման քանակների:

2. Մարտ - ապրիլ ամիսներին իրականացվել են հանրակրթական դպրոցների “Մայրենի 5-6”, “Ինֆորմատիկա 6-7”, “ Հայոց լեզու 7-9”, “Գրականություն 7-9”, “Հանրահաշիվ 7-9”, “Երկրաչափություն 7-9”, “Երաժշտություն 5-7”, ավագ դպրոցի հումանիտար հոսքային դասարանների համար նախատեսված “Ռուսաց լեզու 10-12”, “Ֆիզիկա 10-11”, “Քիմիա 10-11” , “Կենսաբանություն 10-11”, դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների հրատարակման մրցույթի բացման, գնահատման և հաստատման աշխատանքները:

Տվյալ առարկայի ներկայացրած դասագրքերի խմբաքանակի գնահատման համար գործել են երկու տարբեր հանձնաժողովներ՝ կազմված գիտակրթական և բուհական հաստատությունների ներկայացուցիչներից և ուսուցիչներից:

3. Դպրոց-կենտրոնների տնօրենների համար անց է կացվել սեմինար, որի ընթացքում պարզաբանվել են հանրակրթական դպրոցների “Մայրենի 5-6”, “Ինֆորմատիկա 6-7”, “ Հայոց լեզու 7-9”, “Գրականություն 7-9”,

“Հանրահաշիվ 7-9”, “ Երկրաչափություն 7-9”, “ Երաժշտություն 5-7”, ավագ դպրոցի հումանիտար հոսքային դասարանների համար նախատեսված “ Ռուսաց լեզու 10-12”, “ ֆիզիկա 10-11”, “Քիմիա 10-11”, “ Կենսաբանություն 10-11, դասագրքերի փորձարկման աշխատանքների հինախնդիրներն ու մեթոդները:

4. Դպրոց - կենտրոններում և ավագ դպրոցներում փորձարկվել են մրցույթով անցած դասագրքերն ու ուսուցչի ձեռնարկները: Դրանց էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ԿԳԼ-ի համապատասխան կայքում: Արդյունքում՝ դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների վերաբերյալ ստացվել են բազմաթիվ դիտողություններ ու առաջարկներ, որոնք տրամադրվել են համապատասխան հրատարակչություններին: Դրանց հիման վրա պատրաստվել են դասագրքերի վերջնական տարբերակները:

5. 2011թ. հունիս-օգոստոս ամիսներին մրցույթով անցած դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների վերջնական տարբերակները ներկայացվել են Կրթության ազգային ինստիտուտ՝ մասնագիտական կարծիքի, որի հիման վրա դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների լրամշակված տարբերակները հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի կողմից՝ որպես հիմնական դասագրքեր:

6. Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանների պայմանագրեր են կնքվել դասագրքերի մրցույթում հաղթած հրատարակչությունների հետ: Հուլիս-օգոստոս ամիսներին իրականացվել է 2011-2012 ուսումնական տարվա 35 անուն դասագրքերի և 12 անուն ուսուցչի ձեռնարկների հրատարակման և բաշխման աշխատանքները:

7. ԴՏՀՏՀ-ի մարզային կոորդինատորների կողմից ամփոփվել են դպրոցներից ստացված 2011-2012 ուսումնական տարվա դասագրքերի հայտերն ու հանձնարարականները, որոնց հիման վրա դպրոցների բանկային հաշիվներից գումարները փոխանցվել են համապատասխան հրատարակչություններին:

8. 2011թ. ընթացքում ԴՏՀՏՀ-ի աշխատակազմը մեթոդական օգնություն և ուսումնասիրություններ կազմակերպելու նպատակով այցելել է հանրապետության մարզեր, հանդիպումներ ունեցել դպրոցների տնօրենների, գրադարանավարների հետ, անցկացրել սեմինարներ և խորհրդակցություններ: Որոշ դպրոցներում աշխատանք է տարվել նաև ծնողների և աշխատանքային կոլեկտիվների հետ:

9. Ուսումնական տարվա ընթացքում ԴՏՀՏՀ-ի աշխատակազմը աշխատանքներ է տարել դպրոցների կողմից դասագրքերի դիմաց համապատասխան ներդրումներն ապահովելու ուղղությամբ՝ դասագրքերի հրատարակման շարունակականությունն ապահովելու նպատակով: Դրա արդյունքում 2011-2012 ուսումնական տարում դասագրքերի դիմաց ներդրումների հավաքագրումը հանրապետության կտրվածքով կազմել է մոտ 99 տոկոս:

11. ՀՀ ԿԳ նախարարի 12.10.2011թ. “Սոցիալապես անապահով երեխաներին ՀՀ պետական ուսումնական հաստատությունների կողմից անվճար տրվող դասագրքերի դիմաց փոխհատուցման ենթակա գումարների մասին” N 1137-Ա/Ք հրամանի համաձայն Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը կատարել է յուրաքանչյուր ուսումնական հաստատությանը վճարման ենթակա գումարների հաշվարկը և ներկայացրել ՀՀ ԿԳ նախարարություն: Արդյունքում պետական ուսումնական հաստատություններին պետական բյուջեի միջոցներից հատկացվել է 120 մլն. դրամի չափով փոխհատուցում:

12. 2011թ. ընթացքում՝ ըստ գործող կարգի, HSBC Հայաստան բանկի կողմից 2 անգամ տրամադրվել են դպրոցների ընթացիկ վճարումների բանկային քաղվածքները: Տարվա ընթացքում ստուգվել է դպրոցների բանկային քաղվածքների համապատասխանությունը և սխալ փոխանցումների հայտնաբերման դեպքում կատարվել են համապատասխան ուղղումներ:

13. ՀՀ վարչապետին է ներկայացվել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական վերազինման և տեղեկատվական և հաղորդակցական նորարարական տեխնոլոգիաների տրամադրման ծրագիրը: Ծրագիրն ընդունվել է ի գիտություն: 2011թ. մարտ ամսից ընթացել են ծրագրի իրականացման աշխատանքները ընթացել են երկու ուղղություններով՝ դպրոցները ծրագրում ընդգրկելու և ստեղծվող համակարգը սպասարկող բանկի ընտրության:

Մշակվել է դպրոցներին տրամադրվելիք փաթեթը՝ ծրագրին մասնակցության դիմումը, հայտի ձևը, ինչպես նաև ծրագրի շրջանակներում դպրոցների կողմից գնման ենթակա սարքավորումների անվանացանկը և նվազագույն տեխնիկական հատկորոշիչները: Դպրոցների տնօրենների շրջանում իրականացվել են խթանման աշխատանքներ: Ստացվել է 16 դպրոցի հայտ: Դպրոցների հայտերը ամփոփելուց

հետո գնային սահմանաչափը պարզաբանելու նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն պոտենցիալ մատակարար ընկերությունների շրջանում: Ուսումնասիրության արդյունքները ամփոփվել և ներկայացվել են ծրագրի սպասարկման համար ընտրված բանկին: Շուկայի ուսումնասիրության արդյունքում սարքավորումների գների պարզաբանումների արդյունքում հայտ ներկայացրած դպրոցներից 10-ը կնքել են համագործակցության հուշագրեր Դասագրքերի և տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի հետ: Մասնակից դպրոցների վերջնական պատվերներն ամփոփվել են և ստացված տեղեկատվությունը տրամադրվել է ծրագիրը սպասարկող բանկին:

Ծրագրի երկրորդ ուղղության շրջանակներում ըստ ծրագրի իրականացման էական երկու չափանիշների կատարվել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի առկայության նախնական ուսումնասիրություն: Կազմվել է ՀՀ-ում գործող և նշված երկու չափանիշներին բավարարող առևտրային բանկերի ցանկը, որոնց ուղարկվել է գնառաջարկի հրավեր: Ցանկում ներառված 4 բանկերից 2-ը ներկայացրել են առաջարկներ, որոնց ուսումնասիրության արդյունքում որպես ծրագրի սպասարկող բանկ է ընտրվել "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ն: "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ-ի հետ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական վերազինման և տեղեկատվական և հաղորդակցական նորարարական տեխնոլոգիաների տրամադրման ծրագրի շրջանակներում կնքվել է համագործակցության պայմանագիր: "Արդշինինվեստբանկին" են տրամադրվել ԴՏՀՏՀՀ -ի կողմից իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև դպրոցների կողմից սարքավորումների համար ներկայացված ամփոփ պատվերի մասին տեղեկատվությունը: "Արդշինինվեստբանկը" պայմանագիր է կնքել մատակարար ընկերության հետ՝ դպրոցների կողմից պատվիրված սարքավորումների մատակարարման վերաբերյալ:

14. ԴՏՀՏՀՀ - ն 2011թ. օգոստոսին մասնակցել է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք/ հավաստագիր/ ստանալու համար վերապատրաստումներ իրականացնելու նպատակով ՀՀ ԿԳՆ-ի հայտարարած վերապատրաստող կազմակերպությունների մրցույթին: Մրցույթի արդյունքում

կազմակերպությանը իրավունք է տրվել իրականացնելու այդ վերապատրաստումները, որի շրջանակում վերապատրաստվել է 12 մասնագետ:

15. 2011թ. հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին ԴՏՀՏՀՀ –ը ուսուցիչներին ատեստավորմանը նախապատրաստելու նպատակով իրականացրել է հանրակրթական դպրոցների շուրջ 352 ուսուցիչների վերարապատրաստում:

16. 2011թ. նոյեմբերից սկսվել է 2011-2012 ուստարվա դասագրքերի վերաբերյալ դպրոցների հաշվետվությունների ընդունման գործընթացը: Դրանք ամփոփելուց հետո կազմվել են մարզային հաշվետվություններ և ներկայացվել ԴՏՀՏՀՀ: Ներկայումս աշխատանքներ են տարվում հանրապետական ամփոփ հաշվետվությունը կազմելու և 2011-2012 ուստարվա դասագրքերի վերարտադրության ներդրումային գումարներն ապահովելու ուղղությամբ: